ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-20/18-Պ

ք. Երևան

« 01 » փետրվարի 2020

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն (այսուհետ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից (այսուհետ Կողմեր), և
«Էյ Էս Սի» ՍՊԸ-ն (այսուհետ Կատարող), ի դեմս տնօրեն Ալեքսանդր Իսպիրյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և պայմանները

1.1. Կատարողը պարտավորվում է մատուցել Պատվիրատուին հետևյալ ծառայությունը՝ 2020թ. ընթացքում կազմակերպել յոթ սեմինար «Հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները և նորությունները » և «Աշխատանքային օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները և նորությունները» թեմաներով՝ դասախոսության և հարց ու պատասխանի ֆորմատով (այսուհետ Սեմինար):
1.2. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների արժեքը /պայմանագրի արժեքը/ մեկ մասնակցի համար կազմում է 90,000 (իննսուն հազար) ՀՀ դրամ: (Կազմակերպությունը հանդիսանում է շրջանառության հարկ վճարող):
1.3. Վճարումն իրականացվում է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո 35 (երեսունհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ըստ փաստացի մասնակցած անձանց թվով:
1.4. Բոլոր վճարումներն իրականացվում են բանկային փոխանցումների միջոցով:
1.5. Փոխանցումներն իրականացվում են Կատարողի բանկային հաշվին, որը նշված է Պայմանագրում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Պատվիրատուն պայմանագրի գործողության ընթացքում իրավունք ունի պահանջել Կատարողից մատուցվող ծառայությունների պատշաճ կատարումը:
2.2. Պատվիրատուն իրավունք ունի Սեմինարի ընթացքում փոխարինել Սեմինարին մասնակցող անձին: Կողմերը արձանագրում են, որ նման փոփոխության կատարումը չի համարվում նոր մասնակցի ընդգրկում և Պատվիրատուի մոտ նոր մասնակցի համար վճարման պարտավորություն չի առաջացնում:
2.3. Պատվիրատուն պարտավոր է ժամանակին վճարել Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց սույն պայմանագրի 1.2 կետում նշված գումարը:
2.4. Կատարողը պարտավորվում է ոչ ուշ քան հինգ աշխատանքային օր առաջ տեղեկացնել Պատվիրատուին հերթական սեմինարի օրվա և ժամի մասին:
2.5. Կատարողը տրամադրում է Պատվիրատուին վերջնական հաշիվ սեմինարի վերջին օրը:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս մաժոր)

3.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, եւ որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Պայմանագիրը կարող է ձևափոխվել կամ փոփոխվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Պայմանագիրը կարող է ժամկետից շուտ դադարեցվել կողմերից մեկի ցանկությամբ՝ 2 (երկու) շաբաթ առաջ ծանուցելով մյուս կողմին:
4.2. Պայմանագրի կապակցությամբ ծագող վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են համաձայն ՀՀ օրենսդրության:
4.3. Պայմանագիրը գործում է մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը:
4.4. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	Պատվիրատու
« Էյ Էս Սի » ՍՊԸ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Երևան,	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ.Հովսեփյան 26
Լալայանց 47/ա շ., 22 բն.	
Հեռ. 095 58 36 02, 095 58 36 01	Հեռ. 010 65 00 15
Բանկ: Ինեկոբանկ ՓԲԸ	Բանկ: Արդշինբանկ ՓԲԸ
h/h. 2052022108401001	h/h. 2470102796740000
ՀՎՀՀ 02587852	ՀՎՀՀ 01540062
Տնօրեն Ա.Իսպիրյան	Գործադիր տնօրեն Մ. Գրիգորյան